Հաստատում եմ՝
Դպրոցի տնօրեն՝ Յ. Պողոսյան

Digitally signed by POGHOSYAN YANA 8007690026
Date: 2023.11.24 11:32:16 CVT

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սյունիքի մարզի «Լեհվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
IV դասարան

Դասվար՝ Լ. Առաքելյան
2023-2024 ուստարի

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս /շ	*Ուս. աշխատանքի բովանդակությունը*	*Կատարման ժամկետը*	*Կատարող*
I	Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում դպրոցի բակում և դասարանում: Դասագրքերի բաշխում, ծանոթացում դասացուցակին, նոր ուսուցիչներին: Դասագրքերի վերանորոգում, դպրոցական կարգ ու կանոնի վերհիշեցում:		դասվար, ծնողներ, աշակերտներ
I I	Զրույց՝ ինչպիսի՞ պահվածք պետք է ունենալ արտակարգ իրավիճակների ժամանակ: Աշակերտների հետ քննարկել օդային տագնապի, պայթյունի ժամանակ կատարվող գործողություններից, երբ մարդը գտնվում է տարբեր վայրերում: Քննարկում թաքստոցների պատրաստվածությունից:	.	դասվար, դպրոցի զինղեկ
I I I	Զրույց՝ Սեպտեմբերի 21- ը անկախության օրն է թեմայով: Հետևողական լինել, որ դասարանի բոլոր աշակերտները դպրոց ներկայանան պատրաստված, ստուգել դասագրքերի վիճակը, սեփական ուժերով վերանորոգեն վնասվածները:	.	դասվար, աշակերտներ
I V	Կատարել դասալսումներ և հետևողական լինել, որ դասարանի բոլոր աշակերտները մյուս դասաժամերին էլ դպրոց ներկայանան պատրաստված:		դասվար, աշակերտներ
V	Հետևողական լինել դասարանի բոլոր սովորողների կարգապահությանը, վարքագծին, միմյանց հետ վարվելակերպին, քաղաքավարության կանոնների պահպանմանը, դասարանի մաքրությանը:		դասվար, աշակերտներ
V I	Անհատական աշխատանքներ կազմակերպել դասարանի որոշ աշակերտների հետ՝ ամրապնդելու աղյուսակի իմացությունը: Դասապրոցեսի, դասամիջոցի որոշակի հատված տրամադրել այդ աշխատանքների կազմակերպմանը՝ օգնության համար ներգրավելով նաև դասարանի լավ սովորողներին:		դասվար, աշակերտներ

VII	Զրույց. Հովհաննես Թումանյանի կենսագրությունը, գործունեությունը: Նախապատրաստել աշակերտներին ՝ այցելելու Թումանյանի թանգարան: Զրուցել, թե ինչպիսի վարքագիծ պետք է ունենալ թանգարանում, կինոթատրոնում: Այցելություն Սունդուկյանի անվան պետական թատրոն՝ դիտելու ‘’Սառցե սիրտը’’ ներկայացումը:		դասվար, աշակերտներ, ծնողներ
VII I	Էքսկուրսիայից ստացած տպավորությունների քննարկում, վերլուծություն: Յուրաքանչյուրը անհատապես ներկայացնեն իրենց տպավորությունները, այնուհետև պատրաստեն գործնական աշխատանք ‘’ Աշնանային էքսկուրսիա’’ վերնագրով:		դասվար, աշակերտներ
I X	Կազմակերպել դաս- ցերեկույթ ‘’ Ուզում եմ, որ բոլորն իմանան’’ խորագրով: Դասի ընթացքում կարևորել դպրոց- ընտանիք կապը, մարդկային բարձր արժեքների ձևավորումը ընտանիքում: Կարևորել մարդ- արարածին՝ իր կատարած արժանի գործերով, ներկայացնել յուրաքանչյուրիս դերը խաղաղության հաստատման գործում:		դասվար, աշակերտներ
X	“Ընթերցանությունը տարրական դասարաններում” ծրագրի շրջանակներում անհատական ստուգել յուրաքանչյուր աշակերտի կարդալու տեխնիկան՝ բառերի քանակը, սահունությունը, արտահայտչականությունը, բովանդակության ընկալումը:		դասվար, ուսումնական գծով փոխտնօրեն
X I	« Ընթերցանությունը տարրական դասարաններում» ծրագրի շրջանակներում կազմակերպել դասը վարում է ծնողը գործընթացը ՝ Վահեի մայրիկ Հասմիկ Զառուկյանի աջակցությամբ: Ուշադիր և հետևողական լինել,որ աշակերտները դասին ներկայանան շատ լավ պատրաստված, լավ մասնակցություն ունենան դասապրոցեսին:		դասվար, աշակերտներ,
X I I	Ամփոփել աշունը, դասարանում ստեղծել ձմեռային գեղեցիկ տեսարան՝ ձմռան առաջին օրվա հետ կապված: Համագործակցելով դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Ա. Մելքոնյանի հետ՝ կազմակերպել ներկայացման դիտում Արտաշատ քաղաքի թատրոնում՝ ‘’Քեֆ անողին քեֆ չի պակսիլ’’:		դասվար, աշակերտներ
XII I	ՈՒշադիր և հետևողական լինել հատկապես բացակայող աշակերտների		դասվար, ուսուցիչներ,

	նկատմամբ, որպեսզի առաջադրանքները կատարեն , բացթողումներ չլինեն:		աշակերտներ
XIV	Հետևողական լինել, որ հնարավորության դեպքում աշակերտները պահպանեն իրենց անձնական հիգիենայի, վիրուսների ,վարակների հետ կապված կանոններ, անհրաժեշտության դեպքում դպրոց հաճախեն դիմակներով:		դասվար, աշակերտներ, ծնողներ
X V	Համագործակցել փոխարինող ուսուցչի հետ, որպեսզի անտեղի բացակայություններ չլինեն, աշակերտները առանց խնդիրների ավարտեն 1-ին կիսամյակը:		դասվար, փոխարինող ուսուցիչ
XVI	Դասարանում փորձնական կիրառել “ Շրջված դասարան” մեթոդը՝ ուղարկելով “Սասունցի Դավթի” մուլտֆիլմը, տեղեկատվություն Դավթի արձանի խորհրդանիշերից: Բացատրել համակարգչից օգտվելու գրագետ և ճիշտ մոտեցումը:		դասվար, ծնողներ
XVI I	Հետևողական լինել, որ սովորողները գնահատեն իրենց ժամանակը, կարողանան ճիշտ պլանավորել իրենց օրը, գնահատեն կրթվելու իրենց հնարավորությունը՝ աշխատելով իրենց ունակություններին համապատասխան:		դասվար, դասավանդող ուսուցիչներ
XVI II	Սովորողների մոտ ձևավորել և զարգացնել միմյանց օգնելու , աջակցելու կարողություններ: ՈՒշադիր լինեն միմյանց նկատմամբ, օգնեն դասարանի դժվարացող աշակերտներին, դասամիջոցների ընթացքում զբաղվեն ինտելեկտուալ խաղերով, որոնք նպաստում են հիշողության, տրամաբանության զարգացմանը:		դասվար, սովորողներ
XIX	Խրախուսել ,որ դասարանի սովորողները մասնակցեն դպրոցում կազմակերպվող “ ՈՒզում եմ, որ բոլորն իմանան …” խորագրով նկարների ցուցահանդեսին: Ընտրել գեղեցիկ աշխատանքները և ներկայացնել ցուցադրության:		դասվար, սովորողներ, ԴԱԿ պատասխանատու
X X	Ուսումնասիրել սովորողների վարքագիծը դասամիջոցների ընթացքում, կատարել նշումներ, որպեսզի մարտ ամսվա ընթացքում կայանալիք անհատական ծնողական ժողովների ժամանակ քննարկվի նաև սովորողների վարքագիծը:		դասվար
XXI	Դասարանը նախապես կբաժանվի 4 խմբի՝ ըստ տարվա եղանակների: Յուրաքանչյուր խումբ իր		դասվար, ծնողներ, աշակերտներ

	հետազոտական աշխատանքը կներկայացնի պաստառով, որում կներառվեն իրենց հետազոտական աշխատանքների նյութերը՝ աքրոստիկոս, բանաստեղծություն, հանելուկ, պատմություն։ Ինքնուրույն ընթերցանության դասին խմբերը գործնական աշխատանքի տեսքով կներկայացնեն իրենց աշխատանքները։		
XXI I	Փետրվարի 21-ին կազմակերպել մայրենիի օրվան նվիրված դասղեկի ժամ՝ քննարկելով Հասմիկ Ափոյանի «Խաղալիքների տունը» գիրքը։ Կազմակերպել, որ սովորողները դասին մասնակցեն հեքիաթի հերոսների դիմակներով՝ ներկայանալով որպես հեքիաթի քաղաքի բնակիչներ։ Դասի ավարտին երեխաները միմյանց գրքեր կնվիրեն։		դասվար, աշակերտներ
XXI II	Գարնանամուտի կապակցությամբ երեխաներն իրենց ընտանիքների համար կպատրաստեն բացիկներ։ Իսկ դասվարի կողմից նվեր կստանան գիպսե արձանիկներ, որոնք կգունազարդեն գարնանային գույներով։		դասվար, աշակերտներ
XXI V	Դասարանում հայտարարել դպրոցում կազմակերպվելիք ասմունքի մրցույթի մասին։ Նախնական փուլի համար աշակերտները կներկայացնեն իրենց նախընտրած ստեղծագործությունը։ Ընտրված աշակերտները կերաշխավորվեն դպրոցական փուլի մասնակցությանը։ Աշակերտներին ծանոթացնել երաժշտության նոր ուսուցչի հետ։		դասվար, հ. լեզվի մեթոդական միավորման նախագահ
XX V	Ուսումնասիրել Վազգեն Սարգսյանի կենսագրությունը, գործունեությունը, դերը հայ ժողովրդի կյանքում։ Կազմակերպել այցելություն Վ. Սարգսյանի տուն- թանգարան։ Հաջորդ օրը քննարկել , թե ինչ տվեց այցելությունը, ինչ նոր բան իմացան Մեծ հայի մասին, ինչպես կշարունակեն նրա կիսատ թողած գործը, կփորձեն նմանվել նրան։		դասվար, աշակերտներ, դպրոցի հոգեբան

1. Ուս տարվաընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

1. Ուս տարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

2. 2.1 Ծանոթանալ աշակերտներին,նրանց նախասիրություններին:

2.2 Ուսման հետ զուգընթաց լինել մանկական ներկայացումներ կազմակերպող թատրոններում, կոլեկտիվ հյուր գնալ,կինոֆիլմեր դիտել, լինել մանկական ժամանցի վայրերում՝ սրճարաններում, խաղասենյակներում:

2. 3 Հետևողական աշխատանքով դաստիարակել սեր գիտելիքի,գրքի, ուսման նկատմամբ:
2. 4 Բարձրացնել գիտելիքի որակը:
2. 5 Ամրապնդել կարգապահությունը և աշակերտների պատասխանատվության բարձրացումը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Անցկացնել զրույցներ

1.Ընթերցել պատմություններ << Մանկական աստվածաշունչ >> գրքից:
2. Պատմել կրոնական ծեսերի ծիսակատարությունների մասին:

3.2 – Գեղագիտական դաստիարակություն

Կրտսեր տարիքից իսկ պետք է աշակերտը տեսնի, զգա, հասկանա գեղեցիկը արվեստում, նկարչության մեջ, առօրյա կյանքում:
Անցկացնել զրույցներ՝ <<Ինչ եմ սիրում նկարել>>, << Քաղաքավարությունն ամեն օր>> թեմայով:

3.3 – Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Պատմել հայոց բանակի, ֆիդայիների հայ ազատամարտիկների մասին: Ամեն մարդ պետք է սիրի հայրենիքը, շենացնի ու հզորացնի: Անցկացնել
զրույցներ՝ <<Իմ բարձրանուն Հայաստան>> և <<Ապրիլի 24՝ Մեծ Եղեռն>> թեմաներով:

3.4 – Ֆիզիկական դաստիարակություն

Հետևել, որպեսզի աշակերտները ակտիվորեն մասնակցեն ֆիզկուլտուրայի դասերին: Կազմակերպել սպորտլանդիաներ, մրցույթներ: Ամրապնդել
գիտելիքները առողջության, հիգիենայի և ֆիզիկական դաստիարակության ձևերի մասին:

3.5 – Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների օգնությամբ կահավորել դասասենյակը և պահպանել մաքրությունը: Անցկացնել զրույց՝ << Ինչո՞վ եմ օգնում ընտանիքիս և ծնողներիս>>
և <<Ի՞նչ եմ ուզում դառնալ>> թեմաների շուրջ:

3.6 – Բնապահպանական դաստիարակություն

Պահպանել բուսական և կենդանական աշխարհը: Դասասենյակում տնկել սենյակային բույսեր, աճեցնել ու խնամել: Տանը խնամել ընտանի
կենդանիներին և թռչուններին: Անցկացնել զրույց՝ << Ապրիր հավերժ, հայրենի, բնաշխարհ>> թեմայով:

4. - *Դպրոց-ընտանիք կապը*

Աշխատանք տանել ծնողների հետ: Անցկացնել ծնողական ժողովներ: Ծանոթանալ աշակերտների ընտանիքներին և նրանց սոցիալական վիճակին:
Կապ պահպանել ծնողների հետ: Անցկացնել զրույց՝ <<Ընտանիքում և դպրոցում երեխաներին պատժելու և խրախուսելու>> միջոցների մասին: